CONTOURGLOBAL
Հիդրո կասկադ

Հայտարարություն մրցույթի մասին

Մրցույթի համարը 17/20

Պատվիրատուն՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Գորիս, Գր.

Տաթեւացու 2 հասցեում, հայտարարում է Մրցույթ։

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգման և ճանապարհի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր)։

Աշխատանքների կատարումն անհրաժեշտ է իրականացնել պայմանագրի երկկողմանի կնքման պահից 24 ամսվա ընթացքում (կորոնավիրուսի հետևանքով տեղաշարժման սահմանափակումները վերացնելուց հետո)։ Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի մրցույթին մասնակցելու հավասար իրավունք, բացառությամբ «ՔոնթուրԳլոբալ հիդրոկասկադ» ՓԲԸ-ի մատակարարների /կապալառուների եւ երրորդ կողմի աշխատանքներ/ (ծառայություններ մատուցողի) կատարողի ներգրավման քաղաքականության պահանջների։ Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝ **Տեխնիկական առաջարկ, Մասնագիտական փորձառություն, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ, Տեխնիկական միջոցներ**։ Ընտրված մասնակիցը որոշվում է սահմանված պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր։ Պայմանագրի համար վճարումը կիրականացվի Կատարողին առաջարկվող պայմանագրի նախագծում սահմանված կարգով։ Սույն ընթացակարգի հրավերը ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ սույն մրցույթի հայտերի (տեխնիկական առաջարկ) բացման նիստը։ Ընդ որում, փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում։ Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձեւով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող աշխատանքային օրը։ Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում։ Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը։ Մրցույթի առաջարկները (տեխնիկական) անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Գորիս, Գր. Տաթեւացու 2 հասցեով, փաստաթղթային ձեւով **մինչեւ 2020թ. հունիսի 4-ը, ժամը 10:00,** եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն կամ անգլերեն։ Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց եւ հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ուղարկում է հրավեր գնային առաջարկները ներկայացնելու համար: Հայտերի (տեխնիկական առաջարկների) բացումը տեղի կունենա քաղաք Գորիս, Գր. Տաթեւացու 2 հասցեում, **2020թ. հունիսի 4-ին ժամը 10:00-ին:** Մասնակիցների **Տեխնիկական փորձի, Անձնակազմի, Նույնանման պայմանագրերի իրականացման փորձի, տեխնիկական միջոցների** վերաբերյալ պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար մասնակիցները հայտով (տեխնիկական առաջարկ) պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր։

CONTOURGLOBAL®
Հիդրո կասկադ

Գնումները իրականացվում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի 391Ա որոշմամբ և «ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգի համաձայն, որը կարող եք գտնել սույն հղումով.

https://eservices.contourglobal.eu/armenia/

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների գծով մասնագետ Ա. Նիկոլայանին:

Հեռախոս՝ 0284 50022

Էլ. փոստ arevik.nikolayan@contourglobal.com

Պատվիրատու՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Հ Ր Ա Վ Ե Ր

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգման և ճանապարհի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի, (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգման և ճանապարհի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17/20 եզակի հղման համարով անցկացվող մրցույթի ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է «ՔոնթուրԳլոբալ հիդրո կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ընթացակարգի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի 391Ա որոշմամբ և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների ընթացակարգը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների բաժնի պատասխանատու անձի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ arevik.nikolayan@contourglobal.com

ՄԱՍ I

1. ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գնման առարկա է հանդիսանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգման և ճանապարհի կառուցման աշխատանքների ձեռքբերումը:

համարը	Աշխատանքի անվանումը
1	**Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգման և ճանապարհի կառուցման աշխատանքների ձեռքբերում**

Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգման և ճանապարհի կառուցման աշխատանքների ձեռքբերման տեխնիկական բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ՄԱՍ 2:

2. ՄԱՍՆԱԿՑԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք.

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ կամ առկա է սնանկության վտանգի վարույթ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի և ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը սույն կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով նախատեսված ցուցակներում ներառվել է հայտը ներկայացնելու օրվանից հետո, ապա նրա տվյալ հայտը ենթակա չէ մերժման:

2.2 Մասնակցության իրավունքի գնահատման համար մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գրավոր հայտարարություն:

2.3 Արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի

(անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից,

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ.

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տաս և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն.

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

Սույն կետի իմաստով ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները:

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար իրավերով պահանջվող՝

1) Տեխնիկական առաջարկ

2) Մասնագիտական փորձառություն

3) ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն

4) Աշխատանքային ռեսուրսներ

5) Տեխնիկական միջոցներ

6) **Լիցենզիա**

7) Կապալառուի գնահատման ստուգաթերթիկ

8) Երրորդ կողմի համապատասխանության հաստատման թերթիկ (կցվում է)

9) ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց Պետական ռեգիստրից քաղվածք, ոչ ավել քան 5 օրվա վաղեմության հայտի ներկայացման պահի դրությամբ:

10) Հայտարարություն իրավերով նախատեսված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստի լինելու վերաբերյալ/կցվում է/:

11) Հայտարարություն գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին:

1. Տեխնիկական առաջարկ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով,

Անհրաժեշտ է ներկայացնել տեխնիկական առաջարկ համաձայն տեխնիկական բնութագրի պահանջների/Տեխնիկական բնութագիրը կցվում է/:

Մրցույթում մասնակցող ընկերությունները մրցույթի նախագիծը կարող են ստանալ էլեկտրոնային տեսքով:

2. «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է Տեխնիկական բնութագրի 3.4 կետով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճենները (պայմանագիր, հանձնման-ընդունման ակտ): Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

3. «ֆինանսական վիճակի մասին տեղեկատվություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին: Կից ներկայացնել նախորդ տարվա հաշվեկշռի 1-ին և 2-րդ ձևերը, Շահութահարկի հաշվարկը, ինչպես նաև տեղեկատվություն հայտի ներկայացման օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: (տեղեկանք հարկային տեսչությունից):

4. Աշխատանքային ռեսուրսներ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է Տեխնիկական բնութագրի 3.3 կետով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

5. Տեխնիկական միջոցներ չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակիցը հայտով ներկայացնում է Տեխնիկական բնութագրի 3.5 կետով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

6. Աշխատանքներին մասնակցող կազմակերպությունից պահանջվում է ներկայացնել տեխնիկական բնութագրի 3.2.4 կետով սահմանված լիցենզիաները:

7.1 Նշված աշխատանքները դասվում են Կապալառուների Աշխատանքի Պաշտպանության Տեխանվտանգության և Շրջակա միջավայրի պահպանման կառավարման ընթացակարգի Ա դասի ռիսկայնությանը: Հաղթող ընկերությունը մինչև պայմանագրի կնքումը 10 օրյա ժամկետում պարտավոր է ներկայացնել նշված ձևաթղթերը հիմնավորող (ընթացակարգեր, քաղաքականություններ, հրահանգներ, գրանցամատյան և այլն): Չապահովելու դեպքում պայմանագիր չի կնքվում և հաղթողի իրավունքը փոխանցվում է երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

3.ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Սույն մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի տեխնիկական առաջարկ/այսուհետ հայտ/:

Մրցույթի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

3.2 Մրցույթի հայտ անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան մինչև 2020թ. հունիսի 4-ը, ժամը՝«10:00»-ն, ք. Գորիս, Գր. Տաթևացու 2 հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գնումների գծով մասնագետ Ա. Նիկոլայանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

4. ՀԱՅՏԵՐԻ/ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ 2020թ. հունիսի 4-ը, ժամը՝ «10:00»-ին, ք. Գորիս Գր. Տաթևացու 2 հասցեում:

4.2. Առաջարկի ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո հանձնաժողովը հավաքվում և բացում է բոլոր ներկայացված առաջարկները: Առաջարկները ներկայացրած ընկերությունների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի կողմից առաջարկները բացելու պահին: Հանձնաժողովը ուսումնասիրում և գնահատում է ներկայացված տեխնիկական առաջարկները, որից հետո հաստատում կամ մերժում է դրանց համապատասխանությունը տեխնիկական պահանջներին, ներառյալ առաքման ժամը և երաշխիքային պայմանները: Հայտը մերժվելու դեպքում մասնակցին ուղարկվում է

էլեկտրոնային ծանուցում, որտեղ նշվում է հայտի մերժման հիմքերը: Հայտի մերժման համար հիմք կարող է հանդիսանալ դրա անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջների: Հայտը մերժվելու դեպքում մասնակցին ուղարկվում է էլեկտրոնային ծանուցում, որտեղ նշվում է հայտի մերժման հիմքերը: Հայտի մերժման համար հիմք կարող է հանդիսանալ դրա անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջների:

Այն պարագայում, եթե ներկայացված փաստաթղթերի հիման վրա հնարավոր չէ որոշել առաջարկի համապատասխանությունը, գնումների բաժինը թեկնածուին խնդրում է ներկայացնել հավելյալ մանրամասներ և ապացույցներ: Տեխնիկական առաջարկն ուսումնասիրելուց և հաստատելուց հետո Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին ծանուցում է տնտեսական առաջարկների բանակցման գործընթացում ներկայացնելու գնային առաջարկներ՝ էլեկտրոնային եղանակով: Համակարգը կառավարող կամ գործընթացի դիտորդ հանդիսացող անձը կարող է տեսնել առաջարկված գները միայն առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո: Առաջարկների ներկայացման վերջնաժամկետի լրանալուց հետո դրանք դասակարգվում են ըստ գնի: Գնային առաջարկների բանակցությունների երկրորդ փուլը կարող է մեկնարկել բոլոր մասնակիցներին պատշաճ կերպով տեղեկացնելուց և նրանցից երկրորդ փուլում մասնակցելու վերաբերյալ գրավոր հաստատում ստանալուց հետո: Այս փուլում Առաջին փուլի (Սկզբնական առաջարկ) ամենացածր առաջարկված գինը հայտարարվում է բոլոր մասնակիցներին՝ առանց տրամադրելու որևէ տեղեկություն այդ գինն առաջարկած մասնակցի մասին: Առավել ցածր ողջամիտ գին առաջարկած մասնակիցը հանձնաժողովի որոշմամբ ճանաչվում է ընտրված մասնակից/ հաղթող: Երկրորդ փուլում առաջարկների ներկայացման ժամկետը լրանալուն պես մշակվում է հաշվետվություն, որտեղ ներկայացված են մրցույթի արդյունքները և Մատակարարի ընտրության առաջարկը: Հաշվետվությունը ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Յաշվետվությունը հաստատելուց հետո 5 օրվա ընթացքում մրցույթի բոլոր մասնակիցները պաշտոնապես տեղեկացվում են առաջարկների դասակարգման և Մատակարարի ընտրության մասին:

Մրցույթին վերաբերող ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը արխիվացվում են և կցվում են Պայմանագրին/Գնման պատվերին/:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

5.1 Ընտրված մանակցի հետ կնքվում է Պայմանագիր «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի Գնումների ուղեցույցի համապատասխան, ընտրված մասնակցին մրցույթի արձանագրության ծանուցումից 30 (երեսուն) օրացույցային օրվա ընթացքում: Նախքան պայմանագիր կնքելը հաղթող մասնակցին կառաջարկվի ծանոթանալ և հաստատել հակակոռուպցիոն փաստաթղթերը: Ընկերությունը կարող է հրաժարվել Պայմանագիր կնքել հաղթող Ընկերության հետ, եթե վերջինս չհամապատասխանի Ընկերության գործող ընթացակարգերին, որի մասին Հաղթողը կստանա պատճառաբանված մերժում:

6. ՀԱՅՏԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը/տեխնիկական առաջարկը/ ներկայացվում է փաստաթղթային ձևով: Մասնակցի առաջարկը, դրան վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից/ ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

6.2 Սույն հրահանգի 6.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) Մրցութային ընթացակարգի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը

6.3 Սույն հրահանգի 6.1 և 6.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ	**“ContourGlobal Hydro Cascade” CJSC**
Աշխատանքների Կապալի Պայմանագիր	**Contract for Procurement of Works**
№__________	**№__________**
Սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) կնքվել է ք. Երևանում, ______/____________________2020թ.-ին հետևյալ կողմերի միջև՝	This Contract (hereinafter **“Contract”**) is executed in Yerevan on ______/____________________, 2020 between:
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ, գրանցված Երևան քաղաքում, Մելիք Ադամյան 2/2 հասցեում, ՀՎՀՀ՝ 02619957, ի դեմս Արա Հովսեփյանի, (այսուհետ՝ **Պատվիրատու**) և	**“ContourGlobal Hydro Cascade” CJSC**, having its seat and registered office at Yerevan city, 2/2 Melik Adamyan St., registered under TIN: 02619957, represented by Ara Hovsepyan in his capacity of Director, hereinafter referred to as **Contractor**, and
«--------» ----, գրանցված ---- քաղաքում, ---- հասցեում, ՀՎՀՀ՝ -----, ի դեմս տնօրեն ----- (այսուհետ՝ **Կապալառու**) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.	**“---------”** ------, having its seat and registered office at ------, -----, registered under TIN: ------, represented by --------, in his capacity of Director, hereinafter referred to as **Performer**, this contract was signed for the following:
ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ	DEFINITIONS
Աշխատանք՝ ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 1.1 կետում.	**Work** – as defined in Clause 1.1 of this Contract;
Հանձնման-Ընդունման Վերջնական Ակտ՝ ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 6.5 կետում.	**Final Acceptance Protocol** – as defined in Clause 6.5 of this Contract;
Միջանկյալ Ակտ՝ ինչպես սահմանված է սույն Պայմանագրի 6.4 կետում	**Interim Protocol** – as defined in Clause 6.4 of this Contract;
Տեխնիկական բնութագիր՝ Աշխատանքի կատարմանը Պատվիրատուի կողմից ներկայացվող և պարտադրվող տեխնիկական պահանջներ և պայմաններ, որոնք սահմանված են Հավելված 2-ում.	**Technical Specification –** technical requirements and conditions submitted and mandated by the Contractor for performance of the Work defined in Annex 2;

Չբացահայտված Տեղեկատվություն (առևտրային գաղտնիք)՝ անկախ ձևից Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեխնիկական, ֆինանսական, կազմակերպչական, առևտրային և Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվություն, որը անհայտ է երրորդ անձանց և Պատվիրատուն միջոցներ է ձեռնարկում այդ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:	**Confidential Information** (trade secret) - regardless of the form any technical, financial, organizational, commercial and any other information concerning the Contractor and its activity which is unknown to third persons and by virtue of its being unknown has an actual or potential commercial value and the Contractor takes measures for the defense of its confidentiality.
1. Պայմանագրի առարկան	**1. Subject of the Contract**
1.1 Սույն պայմանագրի շրջանակներում (այսուհետ՝ Պայմանագրի) Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կապալառուն համաձայնում է կատարել ------------------ աշխատանքներ (այսուհետ՝ Աշխատանք) սույն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 2-ում և Հավելված 3-ում ներկայացված տեխնիկական բնութագրի և նախահաշվի հիման վրա, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքը և վճարել համաձայն Պայմանագրի:	1.1 Under the provisions of the present contract (the Contract) the Contractor assigns and the Performer accepts to -------------------- (the Work) based on terms of Technical Specification and Bill of Quantity appended to this Contract as Annex 2, which is an integral part hereof, and the Contractor shall accept the Work and pay for the Work as per this Contract.
2. Կապալառուի երաշխավորությունները	**2. Performer's representations and warranties**
2.1 Կապալառուն երաշխավորում է, որ ունի սույն Պայմանագրով սահմանված Աշխատանքը իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները և լիցենզիաները, որոնք պահանջվում են ՀՀ օրենսդրությամբ:	2.1 The Performer warrants that it has all permissions and licenses required by legislation of Armenia necessary for performance of the Work, defined in this Contract.
2.2 Կապալառուն երաշխավորում և պարտավորվում է Աշխատանքը կատարել ժամանակին, պատշաճ ձևով, բարձր որակով և պրոֆեսիոնալ մակարդակով՝ համաձայն սույն Պայմանագրի, ՀՀ օրենսդրության,	2.2 The Performer warrants and undertakes to perform the Work in time, properly, with high quality and professional level, in accordance with this Contract, legislation of

Պատվիրատուի ցուցումների, պահանջների և արժեքների:	Armenia and the instructions and requirements of the Contractor.
3. Տարածք մուտք	**3. Access to site**
3.1 Պատվիրատուն պարտավոր է տրամադրել Կապալառուին և նրա աշխատակիցներին բոլոր անհրաժեշտ լիազորությունները ապահովելու համար իրենց մուտքը Պատվիրատուի տարածք: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին առնվազն 24 ժամ առաջ տեղյակ պահել նման մուտքի անհրաժեշտության մասին:	3.1 The Contractor shall provide all necessary authorizations to the Performer and its Employees to ensure their access to the Contractor site. The Performer shall inform the Contractor about the necessity of such access at least 24 hours before.
3.2 Կապալառուն պարտավոր է տրամադրել այն աշխատակիցների ցանկը, որոնք պետք է մուտք գործեն շինարարության տարածք Պայմանագրի գործողության ողջ տարածքում:	3.2 The Performer shall provide the list of its Employees which shall have access to the construction site during the whole duration of this Contract.
4. Գինը և վճարումը	**4. Price and payment**
4.1 Աշխատանքի համար Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է -----(------) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ:	4.1 The total price of the Contract for the Work constitutes AMD ------ (-----) VAT excluded.
4.2 Կապալառուի գնային առաջարկում ներառված, հավելված 3-ում ներկայացված միավորի գները գործում են սույն պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում և ենթակա չեն փոփոխության:	4.2 The unit prices fixed in Annex 3 are valid for the whole term of this Contract and are not subject to change.
4.3 Աշխատանքի համար վճարումը կատարվում է հաշիվ-ապրանքագիրը, և Վերջնական ԸՆԴՈՒՆՄԱՆ-Հանձնման Ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում:	4.3 The payment for the Work shall be done within 30 /thirty/ days from the date of the bilateral signature of the invoice, and Final Acceptance Protocol.
4.4 Բոլոր վճարումները իրականացվում են բանկային փոխանցման միջոցով՝ ՀՀ դրամով:	4.4 All payments shall be made via bank transfers in AMD.

5. Աշխատանքի կատարումը	**5. Work performance**
5.1 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին, Հավելված 2-ին, 3-ին և 4-ին, Աշխատանքի կատարման ընթացքում Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին և ցուցումներին, ՀՀ օրենսդրությանը, ինչպես նաև սովորաբար և անվերապահորեն նման Աշխատանքի կատարմանը ներկայացվող նորմերին, կանոնների և ստանդարտներին համապատասխան:	5.1 The Performer shall perform the Work in accordance with this Contract, Annex 2, 3 and 4 the requirements and instructions presented by the Contractor during the Work performance, the legislation of Armenia and the norms, rules and standards generally and absolutely presented for performance of such Work.
5.2 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարել անձամբ:	5.2 The Performer shall perform the Work personally.
5.3 Կապալառուն պարտավոր է Աշխատանքը կատարելիս պահպանել շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության կանոնները և այլ պարտադիր պահանջներն ու նորմերը, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Պատվիրատուի կողմից Հավելված 4-ով: Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Աշխատանքի կատարման ժամանակ կամ դրա հետ կապված Կապալառուի աշխատողներին և/կամ երրորդ անձանց և/կամ Կապալառուի և/կամ երրորդ անձանց գույքին պատճառված վնասի համար: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին անմիջապես տեղեկացնել շրջակա միջավայրի վրա բացասական ներգործություն ունեցող կամ առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները խախտող յուրաքանչյուր պատահարի մասին, ինչպես նաև վերջինիս ներկայացնել գրավոր զեկույց նման պատահարների վերաբերյալ, պատահարը տեղի ունենալուց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օր հետո:	5.3 The Performer shall comply to all environmental, health and work safety and other mandatory requirements and norms provided by the legislation of Armenia and the Performer as per Annex 4 when performing the Work. The Contractor shall not be responsible for the damages caused to Performer's employees and/or third persons and/or the property of third persons during performance of the Work or related to it. The Performer shall inform immediately the Contractor for each occurred incident which has negative effect on the environment or breaches the health and safety requirement as well as shall submit a written report to Contractor for such incident not later that one business day as from its occurrence.
5.4 Կապալառուն պարտավոր է մինչև Աշխատանքը սկսելը առնվազն 48 (քառասունութ) ժամ առաջ տեղեկացնել Պատվիրատուին Աշխատանքը սկսելու մասին և Պատվիրատուին ներկայացնել Աշխատանքը	5.4 The Performer shall inform the Contractor at least 48 (forty eight) hours prior to start of the Work and provide a clear and detailed schedule of Work.

կատարելու հստակ և մանրամասն ժամանակացույց:	
5.5 Սույն Պայմանագրով նախատեսված Աշխատանքը կատարելիս Կապալառուն և Կապալառուի աշխատակիցները ներկայացնում են Պատվիրատուին և հետևաբար պետք է գործեն բարձր պրոֆեսիոնալ կերպով, Պատվիրատուի շահերից ելնելով, բարեխղճորեն և ողջամտորեն:	5.5 When performing the Work defined in this Contract, the Performer and the Performer's Employees represent the Contractor, thus they shall act in highly professional way, for the interests of the Contractor, in good faith and reasonably.
5.6 Աշխատանքը կատարելիս Կապալառուն պարտավորվում է գործի դնել նման կապալառուի ամբողջ ողջամիտ ուշադրությունը և հմտությունները՝ նման Աշխատանքի կատարման համար ընդունված ընդհանուր ստանդարտներին համապատասխան:	5.6 When performing the Work the Performer shall use all reasonable care and skills of the performer of such Work in accordance with the generally accepted standards for performance of such Work.
5.7 Ենթադրվում է, որ Կապալառուն ունի ամբողջական պատկերացում իրականացվող Աշխատանքի ծավալի և բնույթի վերաբերյալ և ունի Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային և այլ պարագաներ, որոնք սահմանված են սույն Պայմանագրում կամ որոնց այլ կերպ հղում է արվում կամ որոնք այլ կերպ անհրաժեշտ են նման Աշխատանքների կատարման համար:	5.7 The Performer shall be deemed to have full knowledge of the extent and nature of the Work and to be allowed for all items of work shown upon, described by or referred to in this Contract or which are otherwise necessary to perform such Works.
5.8 Սույն Պայմանագրի 5.1-5.7 կետերի պահանջների չկատարումը կարող է հանգեցնել Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի դադարեցման:	5.8 Non-fulfilment of the requirements mentioned in Clauses 5.1-5.7 shall be a ground for unilateral termination of the Contract by Contractor.
6. Աշխատանքի ընդունումը	**6. Acceptance of the Work**
6.1 Պատվիրատուն իրավունք ունի իր հայեցողությամբ ստուգել Կապալառուի կատարած Աշխատանքի ընթացքը և որակը Աշխատանքի կատարման ընթացքում առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը: Այդպիսի հսկողության իրականացման	6.1 The Contractor shall be entitled to check the process and the quality of the Work during performance by the Performer at its discretion without interfering Performer's activity. Should deficiencies be discovered as

արդյունքում թերություններ հայտնաբերելիս Պատվիրատուն պարտավոր է անհապաղ տեղեկացնել Կապալառուին:	a result of such inspection, the Contractor shall immediately inform the Performer.
6.2 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Աշխատանքը ընդունելուց և պահանջել հատուցելու դրանով իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է անհնար:	6.2 The Contractor shall be entitled to refuse acceptance of Work and to request reimbursement of the damages caused thereby, if the Performer does not start performance of the Work on time or performs the Work so slowly that its termination on time becomes impossible.
6.3 Պատվիրատուի կողմից Աշխատանքի ստուգման ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուն պարտավոր է վերացնել հայտնաբերված թերությունները և համապատասխանեցնել Աշխատանքը Պատվիրատուի պահանջներին 5 (հինգ) օրվա ընթացքում:	6.3 In case deficiencies are discovered by the Contractor during checking of the Work, the Performer shall eliminate the discovered deficiencies and comply the Work with the requirements of the Contractor within 5 (five) days.
6.4 Աշխատանքի արդյունքի ստուգման արդյունքում սույն Պայմանագրով սահմանված կարգով Պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուի հետ կազմվում է Միջանկյալ Ակտ, որտեղ նշվում է, որ Աշխատանքը ընդունված է վերապահումով: Այդպիսի ակտը համարվում է թերությունների ակտ, որտեղ սահմանվում են Աշխատանքի արդյունքում հայտնաբերված թերությունները և դրանց վերացման ժամկետները, եթե Պատվիրատուն պահանջում է թերությունների վերացում:	6.4 In case of revealed deficiencies, an Protocol shall be executed with the Performer defining that the Work has been accepted with reserves. Such Interim Protocol shall be deemed as a deficiency act, where should be defined the deficiencies discovered in the Work result and the terms for their elimination if the Contractor requests elimination of the deficiencies.
6.5 Թերությունների վերացումից հետո Վերջնական Ընդունման-հանձնման Ակտը հաստատվում և երկկողմանի ստորագրվում է Կողմերի կողմից՝ հաստատելով Աշխատանքի ընդունումը:	6.5 After elimination of all deficiencies, Final Acceptance Protocol shall be approved and bilaterally signed by the Parties certifying the acceptance of Work.
7. Թերությունների վերացումը	**7. Elimination of deficiencies**
7.1 Գործող օրենսդրության և/կամ սույն Պայմանագրի խախտմամբ Աշխատանքի կատարման կամ Աշխատանքի թերություններով կամ ոչ ամբողջական	7.1 In case the Work is performed with breach of the applicable legislation and/or this Contract or with deficiencies or partially, which have made the Work result unsuitable

կատարման, որոնք դարձրել են Աշխատանքի արդյունքը օգտագործման համար ոչ պիտանի կամ Աշխատանքի ոչ ամբողջական կամ թերի կամ թերությամբ կատարման դեպքում Կապալառուն պարտավոր է Կողմերի միջև համաձայնեցված ժամկետի ընթացքում, որը չպետք է գերազանցի 5 (հինգ) օրը անվճար նորից կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի թերությունները: Աշխատանքի պատշաճ կատարման համար Կապալառուին տրամադրված վերոնշյալ ժամկետը վերջինիս չի ազատում սույն Պայմանագրով սահմանված տույժերը վճարելու իր պարտավորությունից: Եթե վերոնշյալ ժամկետում Կապալառուին չի հաջողվում նորից պատշաճ կատարել Աշխատանքը կամ վերացնել կատարված Աշխատանքի մեջ հայտնաբերված թերությունները կամ չի հաջողվում վերացնել դրանք ամբողջությամբ կամ եթե դրանք էական կամ չվերացգող են, Պատվիրատուն բացառապես իր հայեցողությամբ իրավասու է`	for use, the Performer shall perform the Work again or eliminate the deficiencies of the Work performed free of charge, within the term, agreed between the Parties, which in no case shall exceed 5 (five) days. The mentioned term provided to the Performer for proper performance of the Work, does not release the Performer from the liability to pay the penalties, provided in this Contract. Should the Performer within the mentioned term again fail to eliminate the deficiencies revealed or if such deficiencies are essential and cannot be eliminated, the Contractor shall be entitled, at its sole discretion, to:
7.1.1 Կապալառուից պահանջել Աշխատանքը կատարել սույն Պայմանագրին համապատասխան` Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 0,1 տոկոսի չափով ուշացման յուրաքանչյուր օրվա համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները` սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.1 request the Performer to perform the Work in accordance with this Contract within the reasonable term, defined by the Contractor and to pay a penalty in the amount of 0.1% of the total price for each delayed day, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.
7.1.2 հրաժարվել չկատարված Աշխատանքի ընդունումից և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 8 տոկոսի չափով խախտման յուրաքանչյուր դեպքի համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները` սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն:	7.1.2 refuse acceptance of the non-performed Work and request to pay a penalty in the amount of 8% of the total Contract price for each case of breach, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.

7.1.3 պահանջել համաչափ նվազեցնելու Աշխատանքի համար սահմանված գինը և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 8 տոկոսի չափով խախտման յուրաքանչյուր դեպքի համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն.	7.1.3 to request to reduce proportionally the price defined for the Work and to pay a penalty in the amount of 8% of the total Contract price for each case of breach, as well as reimburse the damages caused in accordance with this Contract and the applicable legislation.
7.1.4 պահանջել հատուցելու թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը և պահանջել վճարել տույժ Պայմանագրի գնի 8 տոկոսի չափով խախտման յուրաքանչյուր դեպքի համար, ինչպես նաև հատուցել պատճառված վնասները՝ սույն Պայմանագրի և գործող օրենսդրության համաձայն.	7.1.4 request to reimburse the expenses incurred by the Contractor to eliminate the deficiencies and to pay a penalty in the amount of AMD 8% of the total Contract price for each case of breach, as well as reimburse the damages caused, in accordance with this Contract and the applicable legislation.
7.2 Պատվիրատուն իրավասու է նաև Կապալառուի հաշվին և ռիսկով անձամբ կամ իր կողմից ընտրված երրորդ անձի միջոցով պատշաճ տեսքի բերել կատարված Աշխատանքը կամ ավարտին հասցնել դրա կատարումը: Կապալառուն պարտավոր է այս հարցում աջակցել Պատվիրատուին և նրան տրամադրել այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:	7.2 The Contractor shall be entitled at its discretion itself or through a third person at Performer's risk and expense complete the Work. The Performer shall assist the Contractor therein and notably hand over all documents necessary for that purpose.
7.3 Եթե կատարված Աշխատանքի միայն մի մասն է թերի, ապա Պատվիրատուն իր հայեցողությամբ իրավասու է ընդունել Աշխատանքի միայն այն մասերը, որոնք զերծ են թերություններից՝ համամասնորեն վճարելով դրանց համար:	7.3 If only part of the Work performed is defective, the Contractor shall be entitled at its discretion accept only those parts that are free from defects and pay proportionally for them.
8. Աշխատանքների կատարման ժամկետը	**8. Term**
8.1 Աշխատանքի կատարման ժամկետը սահմանվում է համաձայն Պատվիրատուի ժամանակացույցի, որը ներկայացված է տեխնիկական առաջադրանքում (հավելված 2):	8.1 The term for performance of the Work is according to the timetable of Contractor, specified in the technical specification – Annex 2.

9. Պատասխանատվություն	9. Responsibility
9.1 Սահմանված ժամկետներում աշխատանքները չկատարելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել վճարել տուգանք 4-րդ կետով սահմանված պայմանագրի ընդհանուր գնի 0,2%-ի չափով յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար:	9.1 Should the Performer be in delay of the performance of the Work, the Contractor is entitled to request the Performer to pay penalties amounting to 0,2% of the Contract total price set in Clause 4 for each day of delay.
9.2 Սույն պայմանագրի 5-րդ կետով և Հավելված 4-ով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կապալառուից պահանջել վճարել տուգանք 4-րդ կետով սահմանված պայմանագրի գնի 8%-ի չափով 7-րդ կետով և Հավելված 4-ով նախատեսված յուրաքանչյուր պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համաձայն:	9.2 Should the Performer fail to fulfil any of its obligations under the Clause 5 and Annex 4, the Contractor is entitled to pay penalties amounting to 8 % of the Contract Price set in Clause 4 for each requirement non-fulfilment or non-proper fulfilment provided in Clause 7 and Annex 4 .
9.3 Եթե Կապալառուն խախտում է ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև սույն պայմանագրի 5-րդ կետով և Հավելված 4-ով սահմանված շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության պահանջները, ապա Պատվիրատուն կարող է դադարեցնել Կապալառուի աշխատանքները (աշխատանքների դադարեցման տևողությունը կախված կլինի խախտման ծանրության աստիճանից): Ստուգում անցկացնելուց և Կապալառուի կողմից ներկայացված ուղղիչ միջոցառումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո, Պատվիրատուն կարող է թույլատրել կամ արգելել շարունակել աշխատանքները: Պայմանագրի ժամկետը չի երկարացվելու աշխատանքների դադարեցման ժամկետով: Նման դեպքում Պատվիրատուն իրավունք ունի պահանջել, որպեսզի Կապալառուն կազմակերպի և պայմանագրում ներգրավված իր անձնակազմի հետ անցկացնի շրջակա միջավայրի, առողջության և աշխատանքի անվտանգության դասընթաց՝ առնվազն 16 ժամ տևողությամբ:	9.3 Should the Performer violate the health and safety requirements specified in the legislation of Armenia, Clause 5 and Annex 4, the Contractor is entitled to suspend the Performer’s activities (the term of the suspension shall depend on the gravity of the violation). After an inspection is performed and proposed by the Performer remediation plan is approved, the Contractor shall have the right to allow or to ban the continuation of the works. The term of the Contract shall not be prolonged with the term of the suspension. In this case Contractor may request from the Performer to organize and hold a health and safety course to its personal who is engaged with the execution of the Contract with duration of not less than 16 hours.
9.4 Կապալառուն պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետում սահմանված	9.4 The Performer shall bear responsibility for breach of warranties, defined in this Contract. The Performer shall fully

պարտավորությունների խախտման համար: Կապալառուն պարտավոր է Պատվիրատուին հատուցել երաշխիքային ժամկետում սահմանված պարտավորությունների խախտման արդյունքում պատճառված վնասը ամբողջությամբ:	reimburse the damage caused to the Contractor as a result of breach of such warranties.
10. Պայմանագրի դադարեցում	**10. Contract termination**
10.1 Սույն Պայմանագիրը դադարեցվում է 10.1.1 պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում, բացառությամբ եթե Կողմերը ունեն չկատարված պարտավորություններ: 10.1.2 երկու կողմերի գրավոր համաձայնությամբ: 10.2 Սույն Պայմանագիրը կարող է միակողմանիորեն դադարեցվել Պատվիրատուի կողմից 10.2.1 ցանկացած խախտման դեպքում՝ 15 օր առաջ Կապալառուին գրավոր ծանուցում ուղարկելով, 10.2.2 առանց պատճառի՝ 15 օր առաջ Կապալառուին գրավոր ծանուցելով և վճարելով կատարված և ընդունված աշխատանքների համար: 10.3 Պայմանագրի 10.2.1 կետով սահմանված պայմաններով Պայմանագիրը դադարեցվելու դեպքում, Պատվիրատուն իրավունք ունի պահանջել 9 կետով սահմանված տուգանքները: Պատվիրատուն կարող է հաշվանցել նախքան պայմանագրի դադարեցումը կատարված աշխատանքի դիմաց Կապալառուին հասանելիք բոլոր գումարները՝ վերը նշված տուգանքների հետ:	10.1 This Contract is terminated in case of: 10.1.1 expiration of the term of the Contract unless Parties have non-fulfilled obligations. 10.1.2 mutual agreement by both parties, expressed in writing. 10.2 This Contract can be terminated unilaterally by the Contractor: 10.2.1 In case of any violation with 15 days written notice submitted to the Performer, 10.2.2 without cause with 15 days written notice to Performer and upon payment for the actually performed and accepted works. 10.3 In case of termination of the Contract as per Clause 10.2.1 the Contractor shall be entitled to receive penalties as per Clause 9. The Contractor has the right to set off all amounts that are due to the Performer for the work done before termination with the penalties amount mentioned above.
11. Ֆորս մաժոր	**11. Force majeure**
11.1 Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել ֆորս մաժորի ազդեցության	11.1 The Parties shall be exonerated from the liability for non-execution or half execution of the obligations envisaged by this Contract, if it is the result of the force majeure influence which has arisen after signing this Contract

պատճառով, որն առաջացել է սույն Պայմանագրի ստորագրումից հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են համարվում. երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, արտակարգ կամ ռազմական դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, հաղորդակցման ուղիների խափանումը, կառավարական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե ֆորս մաժորի ազդեցությունը տևում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է միակողմանի հրաժարվել սույն Պայմանագրից՝ նախապես այդ մասին տեղյակ պահելով մյուս Կողմին:	and which Parties could not foresee and prevent. The mentioned situations are earthquake, inundation, fire, war, declaration of state of emergency or martial law, political movements, termination of the means of communication work, governmental bodies' acts, etc., which make impossible the execution of the obligations envisaged by this Contract. If the force-majeure continues more than 3 (three) months, each Party shall be entitled to terminate this Contract with a prior notice.
12. Լրացուցիչ դրույթներ	**12. Supplementary provisions**
12.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից պարտավորությունների ամբողջական կատարումը:	12.1 The Contract shall enter into force upon bilateral signature and shall be valid till full performance of obligation of the Parties.
12.2 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն երկու Կողմերի կողմից քննարկված և ստորագրված առանձին համաձայնությամբ: Փոփոխությունները կհամարվեն օրինական, եթե Կողմերը դրանք իրականացրել են սույն Պայմանագրի ձևով՝ ստորագրելով մեկ ընդհանուր փաստաթուղթ:	12.2 The amendments and additions to this Contract shall be discussed by the Parties mutually and defined in a separate amendment. The amendments shall be valid if the Parties have executed them in the form of this Contract by executing one mutual document.
12.3 Սույն Պայմանագիրը ղեկավարվում և մեկնաբանվում է ՀՀ օրենսդրությամբ:	12.3 This Contract shall be governed by and interpreted in accordance with legislation of Armenia.
12.4 Սույն Պայմանագրով բոլոր ծանուցումները պետք է ուղարկվեն էլեկտրոնային նամակով, հեռապատճենով կամ գրավոր նամակով՝ սույն Պայմանագրում նշված հասցեներով:	12.4 All notices of this Contract shall be by e-mail, fax or written letter, by the addresses defined in this Contract.
12.5 Սույն պայմանագիրը կազմվել է երկու հավասարազոր բնօրինակով՝ հայերեն և անգլերեն լեզուներով: Լեզուների միջև անհամապատասխանության դեպքում,	12.5 The present Contract was signed in two identical originals in Armenian and in English language. In the event of conflict between the English and Armenian language versions of

նախապատվությունը տրվում է հայերեն լեզվին:	this Contract, the Armenian language version shall prevail.
12.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ դատարաններին:	12.6 All disputes in relation to the Contract should be solved by negotiations between the parties hereto. In case the latter is impossible the dispute should be brought before the competent court of the Republic of Armenia.
12.7 Կողմերը հաստատում են, որ սեփական բիզնեսը և ներքին հարաբերությունները կազմակերպելու ժամանակ՝ Պատվիարտուն և Կապալառուն առաջնորդվում են Պատվիրատուի Հակակոռուպցիոն քաղաքականություն (հավելված 5), Կապալառուի վարվեցողության կանոնագիրք (հավելված 6) և Վաճարողի հավաստագրում – պատժամիջոցների մասին օրենսդրության պահանջներ (Հավելված 7) քաղաքականություններին: Կողմերը պարտավորվում են չներգրավվել որևէ գործունեության, որը կարող է ենթադրել տվյալ քաղաքականության պահանջների խախտում կամ հանգեցնել խախտման: Կողմերը համաձայնվում են, որ ցանկացած համաձայնագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների հետ կապված, լինի գրավոր կամ այլ կերպ, ո՛չ կողմերից որևէ մեկը, ո՛չ էլ նրա ղեկավարները, աշխատակիցները, դուստր ընկերությունները կամ նրա գիտությամբ՝ գործակալները կամ ներկայացուցիչները ուղղակի կամ անուղղակի ձևով չեն առաջարկի, խոստանա կամ թույլատրի նվերի տրամադրում կամ արժեքավոր որևէ այլ բանի վճարում, այդ թվում՝ առանց սահմանափակման, չեն կիսվի կամ չեն խոստանա կիսվել որևէ վճարումներով կամ դրամական այլ միջոցներով, որոնք ստացել են, ստանում են կամ կստանան ՔոնթուրԳլոբալի հետ որևէ համաձայնագրի շրջանակներում՝ ի շահ կամ ի օգուտ որևէ պետական պաշտոնյայի կամ որևէ պետական պաշտոնյայի ընտանիքի	12.7 The Parties acknowledge that in conducting their business and managing their internal relations, both the Performer and the Contractor operate by reference to the principles contained in the Contractor's Anticorruption Policy – Annex 5, the Performer Code of Conduct – Annex 6 and Vendor Certificate – Sanctions Laws - Annex 7 Policies. The Parties shall not engage in any conduct that would constitute a breach of these Policies or would result in a breach of these Policies. The Parties agree that, with respect to the services provided under any agreement, whether written or otherwise, neither it nor any of its principals, employees, affiliates, or to its knowledge, agents or representatives will directly or indirectly, make, promise or authorize the making of any offer, gift or payment of anything of value, including without limitation, the sharing or promise to share its fees or any other funds that it has received, receives or will receive under any agreement with ContourGlobal, to or for the benefit of any Government Official or family member or close business associate of any Government Official, for the purpose of improperly: (i) influencing any act or decision of the Government Official in his or her official capacity; (ii) inducing the Government Official to do or omit to do any act in violation of his or her lawful duty; (iii) securing any improper advantage; or (iv) inducing the Government Official to use his or her influence to affect any governmental act or

անդամի կամ մտերիմ գործընկերոջ, ոչ պատշաճ կերպով՝ (ա) ազդելով պետական պաշտոնյայի պաշտոնական դիրքով պայմանավորված որևէ գործողության կամ որոշման վրա, (բ) դրդելով պետական պաշտոնյային անել կամ չանել որևէ գործողություն՝ իր պաշտոնեական պարտականությունների խախտմամբ, (գ)ստանալով որևէ ոչ պատշաճ առավելություն, կամ (դ) դրդելով պետական պաշտոնյային օգտագործել իր ազդեցությունը կառավարության որևէ որոշման կամ ակտի վրա ազդելու համար (վերոնշյալ «Արգելված վճարումներից» որևէ մեկը): Կողմերը պետք է անհապաղ զեկուցեն մյուս կողմին ցանկացած Արգելված վճարման մասին:	decision (any of the foregoing a “Prohibited Payment”). The Parties shall promptly report to the other any Prohibited Payment.
12.7.1 Անկախ սույն Պայմանագրի ցանկացած այլ դրույթից, Պատվիրատուի պահանջով, Կապալառուն պետք է թույլ տա անկախ հաշվապահներին, բացի նրանցից, ովքեր ներկայացնում են Պատվիրատուին կամ Կապալառուին, որոնք ունեն համապատասխան որոկավորում անցկացնելու քննություն և զեկուցելու Պատվիրատուին ցանկացած կասկածելի կամ խնդրահարույց հարցի մասին, որոնք վերաբերում են հետևյալին	12.7.1 Notwithstanding any other provision of this Contract, upon request of Contractor, the Performer shall permit independent accountants, other than those who represent the Performer or the Contractor, that are suitably qualified to have full access to, conduct a review of, and report any suspicious or questionable activity of any kind to Contractor in respect of:
(ա) Պատվիրատուի համար Կապալառուի կողմից կատարված աշխատանքների հետ կապված ցանկացած ֆինանսական գրքեր, հաշիվներ և գրառումներ, և	(i) any financial books, accounts and records of the Performer related to the Works performed for the Contractor; and
(բ) ցանկացած պայմանագիր կամ ենթապայմանագիր, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են Պատվիրատուի համար կատարված աշխատանքի, նրան մատուցած ծառայության կամ սարքավորումների հետ, և	(ii) any contracts or subcontracts that relate, directly or indirectly, to work performed for, or services or equipment provided to the Contractor; and
(գ) Պատվիրատուից ստացված միջոցներով կատարված կամ Պատվիրատուի համար	(iii) any payments made with funds received from Contractor or in connection with the work performed for Contractor.

կատարած աշխատանքի հետ կապված ցանկացած վճարում.	
Բացի դրանից, եթե Պատվիրատուն ունի որևէ լուրջ մտահոգություն կամ ունի հիմք ենթադրելու, որ արգելված վճարում է կատարվել, խոստացվել կամ լիազորվել, ապա Կապալառուն պետք է բարեխղճորեն համագործակցի Պատվիրատուի և նրա ներկայացուցիչների հետ, պարզելու, այդ խախտումը տեղի է ունեցել, թե ոչ:	In addition, if Contractor has any reasonable concerns or has reason to believe that a Prohibited Payment has been made, promised or authorized, Performer shall cooperate in good faith with Contractor and its representatives in determining whether such a violation occurred.
12.7.2 Անկախ սույն Պայմանագրի որևէ այլ դրույթից, Կապալառուն համաձայնում է, որ սույն 12.7 կետի որևէ խախտում բարեխղճորեն և իր հայեցողությամբ գործող Պատվիրատուի համար կհանդիսանա բավարար պատճառ ամբողջությամբ կամ մասնակիորեն անվավեր համարելու սույն պայմանագիրը, որի դեպքում Կապալառուն կզրկվի սույն Պայմանագրով նախատեսված ցանկացած լրացուցիչ վճարման պահանջի իրավունքից, բացի այն, որ նաև օրենքի սահմաններում պետք է պատասխանատվություն կրի պատճառած վնասի կամ դրանց լուծման համար:	12.7.2 Notwithstanding any other provision of this Contract, Performer agrees that any breach of this Clause 12.7 shall be sufficient cause for Contractor, acting in good faith and at its sole discretion, immediately to declare this Contract, in whole or in part, null and void, in which case Performer shall forfeit any claim to any additional payments due under this Contract in addition to being liable for any damages or remedies available under applicable law.
12.7.3 Կապալառուն ներկայացնում է, երաշխավորում և համաձայնում, որ ոչ Կապալառուն, ոչ էլ Կապալառուի որևէ տնօրեն, աշխատակից, մասնաճյուղ/փոխկապակցված անձ, գործակալ կամ ներկայացուցիչ (համախմբված, «Գործընկերներ») (ա) պաշտոնապես չի մեղադրվել կամ դատապարտվել ցանկացած ֆինանսական հանցագործության համար (բ) չի ենթարկվել որևէ հետաքննության կամ ներգրավված եղել որևէ պաշտոնյայի կամ կառավարության ներկայացուցչի, կամ ստորաբաժանման, գործակալության կամ լծակի (որը ներառում է տարածաշրջանային կառավարման մարմինը կամ պետական պատկան մարմինները) օգտին որևէ վճարման	12.7.3 Performer represents, warrants and agrees that neither Performer nor any of its principals, employees, affiliates, agents or representatives (collectively, "Associates"): (i) has been formally charged or convicted of any financial crime; (ii) is or was the subject of any investigation, inquiry or proceeding (whether formal or informal) relating to any offer, payment, or gift, promise to pay, or authorization of the payment of anything of value to or for the benefit of any officer or employee of a government, or any department, agency or instrumentality thereof (which includes a regional governmental body or a government-owned business), or of a public international

կամ արժեքավոր իր տալու, կամ միջազգային հանրային կազմակերպության (օրինակ՝ Համաշխարհային բանկ, Եվրոպական համայնք կամ Աֆրիկյան զարգացման բանկ), կամ որևէ քաղաքական կուսակցության կամ կուսակցության պաշտոնյայի, կամ քաղաքական գրասենյակի թեկնածուի (վերը նշված «Կառավարության պաշտոնատար անձ») որևէ առաջարկի, վճարման կամ նվերի, վճարման խոստումի հետ կապված հարցման կամ վարույթի մեջ (պաշտոնական կամ ոչ պաշտոնական)։ (գ) ներկայումս հանդիսանում է կամ հետագայում կհանդիսանա, կամ ներկայումս որևէ պետական պաշտոնյայի կամ նրա ընտանիքի անդամի, կամ որևէ պետական պաշտոնյայի բիզնես գործընկերոջ գործատուն է կամ կլինի	organization (such as the World Bank, the European Community or the African Development Bank), or any political party or party official or a candidate for a political office (any of the foregoing a “Government Official”); or (iii) is currently or will become, or currently employs or will employ, during the term hereof, any Government Official or any family member or close business associate of any Government Official.
12.7.4 Կապալառուն հավաստում և երաշխավորում է, որ ինքը և իր գործընկերները ծանոթ են և հասկանում են Եվրամիության, Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում գործող հակակոռուպցիոն, կաշառակերության դեմ պայքարի, հակաահաբեկչության և փողերի լվացման ու կիրառելի նմանատիպ օրենքների դրույթներին, այդ թվում, առանց սահմանափակման, ԱՄՆ-ի Արտաքին Կոռուպցիոն Դրսևորումների Ակտին, Մեծ Բրիտանիայի Կաշառակերության Դրսևորումների 2010թ-ի Ակտին, Միջազգային Բիզնես Գործարքներում Օտարերկրյա Պետական Պաշտոնյաների Կաշառակերության Դեմ Պայքարի ՏՀԶԿ կոնվենցիային (հավաքականորեն, որ «կաշառակերության դեմ պայքարի օրենքներ»)։ Սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար և սույն պայմանագրի ողջ ընթացքում Կապալառուն իր և իր գործընկերներից յուրաքանչյուրի համար առաջադրում և շարունակելու է առաջադրել լիովին համապատասխանել Կաշառառության Դեմ	12.7.4 Perfomer represents and warrants that it and its Associates are familiar with and understand the provisions of the applicable, UK, European Union and U.S. anti-corruption, anti-bribery, anti-terrorism and anti-money laundering and similar laws, including without limitation the U.S. Foreign Corrupt Practices Act, the UK Bribery Act 2010, and the OECD Convention on Combating Bribery of Foreign Public Officials in International Business Transactions (collectively, the “Anti-Bribery Laws”). In rendering its services pursuant to this Contract, Performer has caused itself and each of its Associates and will, throughout the term of this Agreement, continue to cause itself and each of its Associates, to comply fully with all Anti-Bribery Laws (without regard in each case to the jurisdictional requirements of such laws). In addition, Performer agrees that it will immediately inform Contractor in the event that any family member or close business associate of the Performer or any of

Պայքարի բոլոր օրենքներն (առանց հաշվի առնելու յուրաքանչյուր գործի համար նման օրենքների իրավական պահանջները): Բացի այդ, Կապալառուն համաձայնում է, որ անմիջապես տեղեկացնի Ընկերությանը այն մասին, եթե Կապալառուի ընտանիքի որևէ անդամ, մոտ բիզնես գործընկերը կամ որևէ գործընկեր ստանձնի որևէ պաշտոն: Նման դեպքում, Կապալառուն համաձայնում է, որ Ընկերությունը իրավունք ունի, իր հայեցողությամբ, Կապալառուին պարտադրել համապատասխան սահմանափակումներ՝ ապահովելու համապատասխանությունը կաշառառության դեմ օրենքների պահանջներին:	its Associates becomes a Government Official. In such event, Performer agrees that Company shall have the right, in its sole discretion, to impose the appropriate restrictions on Performer to ensure compliance with the Anti-Bribery Laws.
12.8 Սույն Պայմանագրի հավելվածները վերջինիս անբաժանելի մասն են կազմում և հետևյալն են. Հավելված 1՝ Շահերի բախման մասին հայտարարագիր Հավելված 2՝ Տեխնիկական բնութագիր և նախահաշիվ Հավելված 3՝ գնային առաջարկ Հավելված 4՝ Տեխնիկական անվտանգության ապահովման պահանջներ Հավելված 5՝ Պատվիրատուի հակակոռուպցիոն կանոնակարգ և համապատասխանելիության հայտարարագիր Հավելված 6՝ Կապալառուի վարվելագծի կանոնակարգ Հավելված 7՝ Վաճառողի հավաստագրում-Պատժամիջոցների օրենսդրություն	12.8 Annexes to this Contract are integral part of the present Contract are the following: Annex 1- Declaration of conflict of interests Annex 2 – Technical Specification and Bill of Quantity Annex 3 –Price offer; Annex 4- Health and Safety requirements Annex 5 – Contractor's Anticorruption Policy and Anticorruption policy compliance statement; Annex 6 - Performer Code of Conduct Annex 7 – Vendor Certificate – Sanctions Laws
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ **«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ** «Ամերիաբանկ» ՓԲԸ, Երևան, Հայաստան բ/հ 15700-17462030100 ՀՎՀՀ՝ 02619957	**CONTRACTOR:** **"ContourGlobal Hydro Cascade" CJSC** Ameriabank CJSC, Yerevan, RA b/a: 15700-17462030100 TIN: 02619957

Հասցե՝ Երևան, Մելիք Ադամյան 2/2 **Տնօրեն՝** **Արա Հովսեփյան** _____________ КАПАLАRUH՝	Address: 2/2 Melik Adamyan Str., Yerevan **Director** **Ara Hovsepyan** _____________ PERFORMER: _____________

Հավելված 1

--- ծածկագրով

մրցույթի հրավերի

ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

մրցույթին մասնակցելու

____ հայտնում է, որ ցանկություն ունի

մասնակցի անվանումը

մասնակցել ________________-ի կողմից «---» ծածկագրով հայտարարված

պատվիրատուի անվանումը

մրցույթի և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

____-ն հայտնում և հավաստում է, որ

մասնակցի անվանումը

հանդիսանում է_______________________________________ռեզիդենտ:

երկրի անվանումը

_____________________-ի՝

մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ ________________________________.

  հարկի վճարողի հաշվառման համարը

- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ____.

  էլեկտրոնային փոստի հասցեն

- գործունեության հասցեն է՝ ____.

  գործունեության հասցեն

- հեռախոսահամարն է՝ ____.

  հեռախոսի համարը

Սույնով _______________________________________-ն հայտարարում և հավաստում է,
մասնակցի անվանում

որ՝

1) բավարարում է «-----» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկ էլեկտրոնային եղանակով.

2) «-------» ծածկագրով մրցույթին մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն, բացակայում է հրավերով սահմանված՝ ______________
մասնակցի անվանում

-ին փոխկապակցված անձանց և (կամ) ________________________________
մասնակցի անվանումը

______________-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ______
մասնակցի անվանումը

____________________________-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավատի տեղեկություններ:

Անունը Ազգանունը Հայրանունը	ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը	Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը

______________________________________ ______________

Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը)

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ումից՝...

Գործընկեր կողմը հայտարարում է՝

- Որ չի ծավալել գործունեություն, որը առաջացնում է սույն պայմանագրի (կամ պայմանագրի թեմայի) առնչությամբ շահերի բախում:

Գործընկեր կողմը հայտարարում է՝
- Որ վերին օղակի ղեկավարությունը (Գլխավոր գործադիր տնօրեն և այլն)/ ղեկավարները և նրանց հարազատները (ամուսիններ և մերձավոր հարազատներ), վերջին 24 ամիսների ընթացքում չեն զբաղեցրել պետական պաշտոն կամ պետական ծառայության համակարգում չեն ծավալել գործունեություն, որը ուղղակի կամ անուղղակի կերպով կներգրավեր ՔոնթուրԳլոբալին պատկանող որևէ ընկերություն:

-Սույնով ներկայացվող հաշիվ-ապրանքագրի գումարի որևէ մաս ապօրինի նպատակով չի վճարվել որևէ պետական պաշտոնյայի և պետական մարմիններին լիցենզիաների, թույլտվությունների և այլ ծառայությունների դիմաց բոլոր օրինական վճարումները հաստատվում են ստացականներով և համապատասխան փաստաթղթերով:

Ամսաթիվ՝ ....

Վայրը՝ ....

Ստորագրություն՝ ....

ContourGlobal Հիդրո կասկադ	TECHNICAL SPECIFICATION Տեխնիկական բնութագիր
Document no. *Փաստաթղթի N*	*Sheet* 1 of 11 *էջ*

Նախագիծ *Project:*	*Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգում և ճանապարհի կառուցում* *Capital repair of Spandaryan HPP pressure pipeline basin and construction of road*	*Security Index* *Անվտանգության ինդեքս*
Անվանում *Title*	*Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգում և ճանապարհի կառուցում* *Capital repair of Spandaryan HPP pressure pipeline basin and construction of road*	

System *Համակարգ*	*Document Type* *Փաստաթղթի տեսակ*	*Discipline* *Կարգ*	*File* *Ֆայլ* Tech.spec. Spand. Fire .doc

REV Վերանայում	*Description of Revisions/Վերանայման նպատակ*
0	For tender Մրցույթի համար

0	27.02.2020	TR Մրցույթ	A. Gasparyan Ա.Գասպարյան	A.Galstyan Ա.Գալստյան	A.Yolyan Ա. Յոլյան
REV Վերանայում	Date Ամսաթիվ	Scope Ծավալ			

Աշխատանքների ծավալը

Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգում և ճանապարհի կառուցում

Scope of the works:

Capital repair of Spandaryan HPP pressure pipeline basin and construction of road

Օբյեկտի ընդհանուր պայմանները և առանձնահատկությունները

General Conditions and characteristics of the site :

1.1. Քոնթուր Գլոբալ Հիդրո կասկադը բաղկացած է Հայաստանի հարավ արևելքում գտնվող Որոտան գետի վրա տեղակայված 3 հիդրոկայաններից: ՔԳ հիդրո կասկադի ընդհանուր դրվածքային հզորությունը կազմում է 404 մՎտ. Կասկադի հիմնական տվյալները ներկայացված են ստորև:

Contour Global Hydro Cascade consists of 3 HPP's situated on the Vorotan River in the southeastern part of Armenia. The total installed capacity of the CG Hydro Cascade is 404 MWT. The key data of the cascade's power stations are given below:

Աղյուսակ՝ ՔԳ հիդրո կասկադի հիմնական տվյալները

Table: Key data of the CG Hydro Cascade

Հիդրոէլեկտրա կայան Hydropower Stations	Նախագծային հզորությունը, մՎտ Rated Capacity MW	Ագրեգատներ ի քանակը և հզորությունը Number & capacity of units, MW	Ջրամբարների հզորությունը, միլ մ3 Ընդամենը/փաստացի Water storage, mill.m^3 total / live	Նախագծային հաշվարկային ճնշումը Design Head m	ՀԷԿ-ի թողարկումը Commissioning of the HPP
Սպանդարյան Spandaryan	76	2 x 38.0	257 / 218	300	1989
Շամբ Shamb	171	2 x 85.5	96 / 80	267	1978
Տաթև Tatev	157.2	3 x 52.4	13,6 / 1,8	552	1970

Սպանդարյան ՀԷԿ-ը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաղաթ գյուղի տարածքում:

Spandaryan HPP is located in the area of Shaghat village, Sisian community of Syunik region.

1. Նշված աշխատանքները պետք կատարվեն 24 ամսում (սկսած պայմանագրի կնքման օրվանից կորոնավիրուսի պատճառով տեղաշարժման սահմանափակումները վերացնելուց հետո) :

1. The mentioned activities shall be carried out within 24 months (from the date of signing the contract, after the lifting of movement restrictions due to coronavirus).

   1.2. Շրջակա միջավայրի ընդհանուր պայմաններ/General environmental conditions:

   - Մթնոլորտային միջին ճնշում՝ 102 կՊա
     Average atmosphere pressure: 102 kPa
   - Մթնոլորտային ջերմաստիճան (մաքս)՝ +35
     Ambient temperature (max) +35
   - Մթնոլորտային ջերմաստիճան (մին)՝ -35
     Ambient temperature (min) : -35
   - Նոմինալ հարաբերական խոնավություն՝ 73%
     Nominal relative humidity: 73%

2. Տեղանքի բարձրությունը ծովի մակարդակից՝ Սպանդարյան ՀԷԿ-ում 1670.0 մ,:
   Height of the site above sea level in Spandaryan is 1670.0 m.

3. Աշխատանքների մանրամասն նկարագրությունը
   Detailed description of the scope:

3.1 սույն ծրագրով նախատեսվում է իրականացնել Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգում և ճանապարհի կառուցում: Բնութագիրը կազմված է «Մոդուլ» ՍՊԸ-ի կողմից կատարված նախագծի հիման վրա:	3.1 Under this project, it is planned to carry out capital repair of Spandaryan HPP pressure pipeline basin and construction of road. The specification has been drawn up based on the project implemented by the "Module" LLC.
Կատարվող աշխատանքների համառոտ ցանկը բերված է ստորև:	***A brief list of the work to be done is presented below.***
3.1.1 Ճնշումային խողովակաշարի վերանորոգման աշխատանքներ	3.1.1 Repair work of the pressure pipeline
• Կողաասիքի հենակների վերանորոգում – *ПО-21, ПО-29, ПО-48 միջանկյալ հենարաններում մոնտաժվում են նոր կողաասիքի հենակներ և հենասալեր, ПО-19, ПО-55 միջանկյալ հենարաններում մոնտաժում են կողաասիքի աջակողմյան սեգմենտային հենակները, ПО-24 միջանկյալ հենարանում մոնտաժում են հենասալերը*	• *Repair of side supports-new side supports and supporting plates are installed in ПО-21, ПО-29, ПО-48 intermediate supports, right-side segmental supports are installed in ПО-19, ПО-55 intermediate supports, supporting plates are installed in ПО-24 intermediate support*
• Խողովակաշարի մեկուսացման աշխատանքներ- *Խողովակաշարի և մետաղական կոնստրուկցիաների արտաքին մակերեսները*	• *Pipeline insulation work -the external surfaces of pipelines and metal constructions are cleaned from the old paint by*

մաքրվում են հին ներկից ավազաշիթային մեթոդով, այնուհետև երկտակ ներկվում են ալյումինի փոշու և օլիֆի խառնուրդից ստեղծված ներկով:

3.1.2 Խրամուղու շեպերի և հենարանների բետոնե հիմքերի վերանորոգման աշխատանքներ

- Խրամուղու արտաքին կողմից ամբողջ երկայնքով 0.6-0.8 մ լայնությամբ, 0.4-0.6մմ խորությամբ մաքրվում է բուսածածկից:
- *ПО-2, ПО-4 միջանկյալ հենարաններում կատարվում է աջ շեպի բարձրացում*
- *ПО-32 միջանկյալ հենարանում կատարվում է աջ շեպի բարձրացում և բետոնե քայքայված հիմնատակի վերանորոգում*
- *ПО-9 միջանկյալ հենարանում կատարվում է ձախ շեպի բարձրացում և բետոնե քայքայված հիմնատակի վերանորոգում*
- *ПО-5, ПО-14, ПО-15, ПО-17, ПО-18, ПО-20, ПО-22, ПО-23, ПО-25, ПО-27, ПО-28, ПО-30, ПО-33, ПО-34, ПО-37, ПО-38, ПО-40, ПО-41, ПО-43, ПО-44, ПО-46, ПО-64 միջանկյալ հենարաններում բետոնե քայքայված հիմնատակները վերանորոգվում են*
- *ПО-47, ПО-49, ПО-50, ПО-53, ПО-54, ПО-56, ПО-58, ПО-59, ПО-61, ПО-62 միջանկյալ հենարանում կատարվում է աջ և ձախ շեպերի բարձրացում բետոնե քայքայված հիմնատակի վերանորոգում*
- *ПО-1, ПО-3, միջանկյալ հենարաններում կատարվում է աջ շեպի բարձրացում*
- *ПО-31 միջանկյալ կողասահքի արգելակներով հենարանում կատարվում է աջ շեպի բարձրացում և բետոնե քայքայված հիմնատակի վերանորոգում*
- *ПО-10 միջանկյալ հենարաններում կատարվում է ձախ շեպի բարձրացում*
- *ПО-7, ПО-12, ПО-13, ПО-16, ПО-19, ПО-21,*

sandblasting method, then, they are double painted with a mixture of aluminum powder and paint oil.

3.1.2 Repair of the concrete foundations of trench slopes and supports

- *The entire outer side of the trench- 0.6-0.8 m in width and 0.4-0.6 m in depth is cleaned from vegetation*
- *Raising of the right slope in ПО-2, ПО-4 intermediate supports*
- *Raising of the right slope and repair of damaged concrete foundation in ПО-32 intermediate support*
- *Raising of the left slope and repair of damaged concrete foundation in ПО-9 intermediate support*
- *Damaged concrete foundations are repaired in ПО-5, ПО-14, ПО-15, ПО-17, ПО-18, ПО-20, ПО-22, ПО-23, ПО-25, ПО-27, ПО-28, ПО-30, ПО-33, ПО-34, ПО-37, ПО-38, ПО-40, ПО-41, ПО-43, ПО-44, ПО-46, ПО-64 intermediate supports*
- *Raising of the right and left slopes, repair of the damaged concrete foundation in ПО-47, ПО-49, ПО-50, ПО-53, ПО-54, ПО-56, ПО-58, ПО-59, ПО-61, ПО-62 intermediate supports*
- *Raising of the right slope in ПО-1, ПО-3 intermediate supports*
- *Raising of the right slope and repair of the damaged concrete foundation in ПО-31 intermediate side supports with brakes*
- *Raising of the left slope in ПО-10 intermediate supports*

ПО-24, ПО-26, ПО-29, ПО-35, ПО-36, ПО-39, ПО-42, ПО-45 կողասահքի արգելակներով միջանկյալ հենարաններում բետոնե քայքայված հիմնատակները վերանորոգում են

- *ПО-48, ПО-51, ПО-50, ПО-52, ПО-55, ПО-57, ПО-60, ПО-59, ПО-63 կողասահքի արգելակներով միջանկյալ հենարանում կատարվում է աջ և ձախ շեպերի բարձրացում բետոնե քայքայված հիմնատակի վերանորոգում*

- *ПО-7, ПО-12, ПО-13, ПО-16, ПО-19, ПО-21, ПО-24, ПО-26, ПО-29, ПО-35, ПО-36, ПО-39, ПО-42, ПО-45 կողասահքի արգելակներով միջանկյալ հենարաններում բետոնե քայքայված հիմնատակները վերանորոգում են*

- Խրամուղու հատակի, շեպերի և բետոնե հիմքերի վերանորոգումը կատարվում է 5 սմ հաստության B15 դասի տորկրետբետոնով. *Նախապես հորիզոնական և ուղղաձիգ 600մմ քայլով զայլիկոնվում է 300 մմ խորությամբ անցքեր (շեպերի վրա անցքերը իրականացնել հորիզոնի նկատմամբ մինիմում 15⁰ անկյան տակ), այնուհետ տեղադրվում Φ10A500c խարսխային ձողերը, հետո տեղադրվում է 4/4/150/150 Bp-1 ամրանային ցանց, որը ֆիքսվում 12/12/600/600 A500c ամրանային ցանցով:*

- Տորկրետացումը կատարել համաձայն ՍՆիՊ 3.03.01-87 կետ 2.88-2.94

3.1.3 Ճնշումային խողովակաշարի շահագործման ճանապարհի կառուցում

- Խրամուղու ամբողջ երկայնքով նախատեսված է 6մ լայնությամբ գրունտային ճանապարհ: Այն տեղամասերում որտեղ ճանապարհի լայնական կտրվածքը գոգավոր է նախատեսված է ջրհեռ առվակներ: Ճանապարհի պաստառը իրականացնել տեսակավորված խճային մասնիկներից հետևյալ

- *Repair of deteriorated concrete foundations in ПО-7, ПО-12, ПО-13, ПО-16, ПО-19, ПО-21, ПО-24, ПО-26, ПО-29, ПО-35, ПО-36, ПО-39, ПО-42, ПО-45 intermediate side supports with brakes*
- *Repair of deteriorated concrete foundations, raising of right and left slopes in ПО-48, ПО-51, ПО-50, ПО-52, ПО-55, ПО-57, ПО-60, ПО-59, ПО-63 intermediate side supports with brakes*
- *Repair of the of deteriorated concrete foundations in ПО-7, ПО-12, ПО-13, ПО-16, ПО-19, ПО-21, ПО-24, ПО-26, ПО-29, ПО-35, ПО-36, ПО-39, ПО-42, ПО-45 intermediate side supports with brakes*
- *Repair of the trench floor, slopes and concrete foundations is carried out with B15 class shotcrete of 5 cm thickness*

300 depth holes are drilled with horizontal and vertical 600 mm cell (make holes on the slopes at a minimum angle of 15⁰ degrees to the horizon), then *Φ10A500c* anchor bars are installed, 4/4/150/150 V-1 reinforcing mesh is installed, which is fixed with 12/12/600/600 A500c reinforcing mesh.

Shotcreting should be carried out as per point 2.88-2.94 of Construction Directives and Rules 3.03.01-87.

3.1.3 Construction of pressure pipeline operation road

A 6 meter-wide soil road is planned along the entire trench. In the areas where the cross-section of the road is incurved, catch drains are envisaged. The roadbed shoud be carried out with the following composition of sorted gravel particles.

կազմով. - Խիճ 40…70մմ – 50% - Խիճ 20…40մմ – 25% - Լիցքային գրունտ -25%	- Gravel 40…70mm – 50% - Gravel 20…40mm – 25% - Filling soil -25%
3.1.4 Աշխատանքի իրականացման փուլերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ, քանի որ նշված փուլերը կախված են ՀԷԿ-ի աշխատանքային գրաֆիկի հետ:	**3.1.4** The stages of the work are agreed with the Contracting Authority as the mentioned stages are related to the work schedule of the HPP.
3.1.5 Կապալառուն պետք է հաշվի առնի, որ մրցութային փաստաթղթերի՝ գծագրերի և ծավալաթերթի պատրաստման ժամանակ, նշված չեն հողային աշխատանքների կատարման մեթոդները՝ ձեռքով կամ մեխանիզմով: Բոլոր այն լրացուցիչ ծախսերը, որոնք առաջանում են բացառապես ձեռքով կատարվող աշխատանքների ժամանակ Կապալառուն պետք է ներառի հողային աշխատանքների ծավալաթերթի միավոր գներում:	**3.1.5** The Contractor should take into account that during preperation of tender documents-drawings and Bill of Quantity, the methods of earth works (manual or mechanical) are not mentioned. All the additional costs, arising from the work done exclusively by hand, should be included by the Contractor in the unit price of the BoQ for earth works.
3.1.6 Կապալառուն պետք է հաշվի առնի շինարարության կազմակերպման հետ կապված բոլոր աշխատանքները, այդ թվում բնապահպանական և աշխատանքի անվտանգության միջոցառումների հետ կապված բոլոր ծախսերը, շինարարական արտադրության դրույթները, ինչպես նաև դրանց հետ կապված լրացուցիչ ծախսերը աշխատանքների միավոր գնի մեջ: Վերականգնմանն անհրաժեշտ բոլոր նյութերի, գրունտների, միաձույլ բետոնե հիմքերի, խողովակների, սարքավորումների տեղափոխման սխեման (այդ թվում ծավալները, հեռավորությունները և աշխատանքների կատարման գնահատումը) Կապալառուն պետք է մշակի «Շինարարական արտադրության կազմակերպում» նախագծում իր հայեցողությամբ:	**3.1.6** The Contractor shall take into account all works related to the organization of construction, including all the costs related to HSE measures, construction production provisions, as well as related additional costs in the unit price of works. The scheme of transportation of all materials - soil, monolithic concrete foundations, pipes, equipment (including volumes, distances, and work performance appraisal) required for repair should be developed by the Contractor at his own discretion in “Construction production organization” project.
3.1.7 Մրցույթին մասնակցող ընկերությունները մրցույթի նախագիծը կարող են ստանալ	**3.1.7** Companies participating in the tender may get

պատվիրատուի գնումների կամ շինարարական բաժնից էլեկտրոնային տեսքով:	the tender design electronically from the Contracting Authority's procurement or construction department.
3.2 Նյութեր և աշխատանքներ	**3.2 Materials and works**
3.2.1 Կապալառուն աշխատանքը իրականացնում է իր ուժերով, նյութերով, միջոցներով, գործիքներով և սարքավորումներով, որոնք ներառված են գնում և պատասխանատվություն է կրում դրանց որակի, ինչպես նաև տեսակի ճիշտ ընտրության համար:	**3.2.1** Contractor shall carry out the Work by its own means, materials, funds, tools and equipment included in the price offer and shall be responsible for their quality as well as for the selection of the right type.
3.2.2 Կապալառուի կողմից տրամադրվող բոլոր նյութերը պետք է լինեն նոր: Օգտագործված, ինքնաշեն նյութերի և վերամշակված պարագաների օգտագործումն արգելված է:	**3.2.2** All the materials provided by Contractor should be new. Forbidden is the use of used, improvised materials and recycled supplies.
3.2.3 Աշխատանքները պետք է կատարել համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի, շինարարարակն կանոնների և նորմերի :	**3.2.3** Works should be carried out in accordance with the existing legal act, norms of the Republic of Armenia.
3.2.4 Մրցույթին մասնակցող կազմակերպությունից պահանջվում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ լիցենզիաներ հետևյալ շինարարության ոլորտներում աշխատանքներ իրականացնելու համար Ա-քաղաքացիական և արտադրական Բ-Հիդրոտեխնիկական ոլորտում	**3.2.4** The companies participating in the tender are required to submit the following documents: Licenses for carrying out works in the the following construction areas: A-Civil and production B-Hydroengineeing
3.3. Մրցույթին մասնակցող ընկերությունը պարտավոր է ունենալ հետևյալ աշխատանքային ռեսուրսները՝ - Առնվազն 2 հիմնական ինժեներ-շինարար(1 ինժեներ հիդրոտեխնիկ, 1 արդյունաբերական և քաղաքացիական ինժեներ շինարար) աշխատակից ոչ պակաս քան 5 տարվա բնութագրում նկարագրված աշխատանքների մասնագիտական փորձով (ներկայացնել համապատասխան դիպլոմների, աշխատանքային պայմանագրերի, CV-ների պատճեններ)	**3.3.** The companies participating in tender should have the following resources: -At least 2 Civil Engineers with at least 5 years of professional experience as described in technical specification (1 hydrotecnical engineeer, 1 civil engineer) (copies of diplomas, employment contracts, CVs should be submitted).
3.4. Մրցույթին մասնակցող կազմակերպությունից պահանջվում է ներկայացնել համապատասխան փաստաթղթեր այն մասին, որ վերջին 3 տարվա ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պակաս չէ հիդրոտեխնիկական ոլորտում աշխատանքների համար 80 մլն., իսկ ընդհանուր քաղաքացիական և արդյոնաբերական	3.4 The Company participating in the tender is required to submit relevant documents stating that the volume of similar works expressed in amount done in the course of the last 3 years for hydeotecnical field is not less than 80 mln , civil constriction field is not less then 40 mln AMD without VAT . In attachment submit copies of relevant documents (Contracts, Performance acts, Acts of acceptance).

շինարարության ոլորտում՝ 40 մլն դրամից առանց ԱԱՀ : Կից ներկայացնել համապատասխան փաստաթղթերի պատճենները (պայմանագիր, կատարողական ակտեր, հանձման և ընդունման ակտեր): **3.5.** Մրցույթին մասնակցող կազմակերպությունից պահանջվող տեխնիկական միջոցներն են՝ - ինքնաթափ ա/մ -2 հատ - տորկրետացման սարքավորում -1հատ - ավտոկրունկ 16 տ բեռն. -1հատ - անվավոր էքսկավատոր 0,5 խ.մ. շերեփով -1հատ - էլեկտրաեռակցման ագրեգատ(САГ) -1հատ - ավազաշիթային սարքավորում -1հատ Ներկայացնել սեփականության վկայականի կամ վարձակալության պայմանագրերի պատճենները: **3.6.** Աշխատանքների իրականացման ժամկետը 24 ամիս է (սկսած պայմանագրի կնքման օրվանից): Կախված սպանդարյան ՀԷԿ-ի աշխատանքնային գրաֆիկից ժամկետները կարող են շտկվել պատվիրատուի կողմից:	3.5 The Company participating in the construction works is required to have the following machinery: - dump truck – 2pcs - shotcreting equipment-1 pc -auto crane with 16 t loading capacity-1 pc -wheeled excavator with a bucket of 0,5 m^3 -1 pc - electro welding unit (САГ)-1 pc - sandblasting equipment – 1 pc They should submit copies of ownership or rental agreement. 3.6 The deadline for implementation of works is 24 days (starting from the date of contract signing). Depending on the work schedule of Spandaryan HPP, the deadlines may be adjusted by the Contracting Authority.
4 Պարտականություններ, սահմանափակումներ, բացառություններ **4.1 Կապալառուի պարտականությունները** Կապալառուի գործնեությունը պետք է համապատասխանի և ՀՀ օրենքներին և նորմատիվ ակտերին : Եթե Կապալառուի գործնեությունը չի համապատասխանում գործող օրենսդրությանը Պատվիրատուն իրավունք ունի արգելել Կապալառուին մուտք գործել տարածք՝ առանց կրելու որևէ պատասխանատվություն վերջինիս կողմից կրած կորուստների համար: Կապալառուն պետք է հետևի, ներկայացնի (պահանջի դեպքում) և պահպանի բոլոր այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են նշված աշխատանքները կատարելու համար:	**4. Responsibilities, limits and exceptions:** **4.1 Obligations of the Contractor** The contractor should comply and follow the respective Armenian legislations and regulations. In cases that the Contractor do not comply with the applicable legislation, the Contracting Authority has the right to refuse access to the site without being held responsible for the subsequent Contractor's losses. Contractor should follow, present when requested and keep records for all necessary documentation related to the scope of works described in this specifications. When contractor has subcontractors for some of the activities, all requirements are also valid for his

Եթե որոշ աշխատանքներ կատարելու համար Կապալառուն ընդգրկում է ենթակապալառու, բոլոր պահանջները պարտադիր են նաև ենթակապալառուի համար:	subcontractors.
Կապալառուն իրավունք ունի տարածք մուտք գործել միայն ըստ Պատվիրատուի աշխատանքի թույլտվության ընթացակարգի:	Access to the site is only by following the work permit procedures of the Contracting Authority.
Մրցույթի ընթացքում բոլոր մասնակիցները իրավունք ունեն Պատվիրատուի հետ միասին մտնել տարածք աշխատանքների ծավալները և կատարման վայրը ճշտելու համար:	During the tendering, all tenderers can request joint visit to the site, together with the Contracting Authority, for clarification of the scope and the place of work.
Կապալառուն պետք է խնամքով վերաբերվի Պատվիրատուի սարքավորումներին և աշխատանքների կատարման ընթացքում կանխարգի դրանց վնասելը:	Contractor should take care and prevent damages on the equipment of the Contracting Authority caused during his activities on the site.
<u>4.1.1.Կապալառուն պատասխանատվություն է կրում հետևյալը ապահովելու համար՝</u>	4.1.1 <u>Contractor is responsible to ensure:</u>
4.1.1.1.Իր աշխատողների փոխադրումը	4.1.1.1 Transportation of all his employees
4.1.1.2.Արտադրական սանդուղքներ մինչև 2 մ բարձրության, աշխատանքային հարթակներ (խարաչո) գործարանային արտադրության:	4.1.1.2 Industrial step ladder with at least 2m.height, and scaffolring platforms of factory manufacturing.
4.1.1.3.Բոլոր անհատական և հատուկ գործիքները, որոնք անհրաժեշտ են նշված աշխատանքները կատարելու համար, բացի Պատվիրատուի կողմից տրամադրվածից:	4.1.1.3 All personal and/or special tools necessary to execute the scope of this works, except the one listed as Contracting Authority's supply.
4.1.1.4.Անհատական պաշտպանության միջոցներ իր աշխատողների համար՝ Պատվիրատուի չափանիշներին համապատասխան:	4.1.1.4 All personal protective equipment for his employees as per the standard of the Contracting Authority.
4.1.1.5.Բարձրությունների վրա կատարվող աշխատանքների դեպքում ապահովել նաև ներքևում աշխատող կամ գտնվող աշխատակիցների անվտանգությունը:	4.1.1.5 When works at heights, to ensure protection, restriction for the people passing or working in the areas below.
4.1.1.6.Անհրաժեշտ չափիչ գործիքներ	4.1.1.6 All neccessary measuring tools.
4.1.1.7.Բոլոր տեսակի թափոնները տեղափոխել հատուկ հատկացված վայր	4.1.1.7 All waste parts to be disposed at designated areas only.
<u>4.2.Աշխատաժամանակ</u>	4.2 <u>Working time:</u>
Աշխատանքներից առաջ կապալառուն պետք է ներկայացնի իր աշխատանքների մանրակրկիտ ժամանակացույցը, աշխատանքային ռեսուրսները՝ կանգառի ժամանակա-հատվածում աշխատանքները ավարտելու համար: Պատվիրատուի նորմալ	Before the start of works, Contractor should present his detailed work schedule and labor resources necessary to complete the scope within the outage period. The normal working time on the site of the Contracting Authority is Day shift, from 9:00 till 17:45. Works, out of the normal working time are

աշխատանքային օրը ցերեկային հերթափոխն է՝ ժ. 9:00-17:45-ը: Ոչ աշխատանքային ժամերին աշխատանքը թույլ է տրվում միայն Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:	allowed only after preliminary agreement with the Contracting Authority.
<u>4.2.1 Աշխատատեղի մաքրությունը</u>	<u>4.2.1 Site cleaning</u>
Իր աշխատանքները կատարելու ընթացքում Կապալառուն պատասխանատվություն է կրում իր աշխատատեղի լրիվ մաքրման և հավաքման համար:	During the execution of the works, the Contractor is responsible entirely of the cleaning and housekeeping of the area where he works.
Սարքավորումները և նյութերը, որոնք չեն օգտագործվում տվյալ պահին պետք է տեղադրված լինեն հատկացված տեղերում: Աշխատանքները կատարելուց հետո տարածքը պետք է մաքրվի, կարգի բերվի և միայն դրանից հետո հանձնվի Պատվիրատուին:	All the equipment and materials which are not currently used, should be arranged in special locations. After the completion of the works, area should be handed over to the Contracting Authority, clean neat and tidy
<u>4.2.2.Աշխատանքների հարմարությունները</u>	<u>4.2.2. Site facilities:</u>
Կապալառուն պետք է ապահովի իր աշխատակիցների բոլոր լրացուցիչ պահանջները, որոնք նախատեսված չեն Պատվիրատուի կողմից տրամադրվող միջոցների ցանկում:	Contractor should ensure on the site, any required by him site facility which he needs additionally to the one listed as a supply of the Contracting Authority.
Պատվիրատուն չի ապահովում ճաշարանով, սննդի պատրաստման կամ սնվելու այլ միջոցներով: Այդ բոլորը պետք է ապահովի Կապալառուն իր և իր ենթակապալառուի աշխատողների համար:	Contracting Authority do not provide any cooking, canteen or other catering. Such should be ensured by the Contractor for his employees and for the employees of any of his subcontractors.
<u>4.3.1.Տեղում էլեկտրական սնուցում</u>	<u>4.3.1 Power supply at the site</u>
Աշխատավայրում առկա 220/380 Վ 50 Հց աղբյուրներից էլեկտրականության սնուցում, այն գտնվում է խողովակաշարի 2 ծայրերում:	The available power supply is: 220/380 V 50Hz,it exists in both edges of the pipeline .
Կապալառուն պետք է ապահովի բոլոր անհրաժեշտ երկարացման լարերը, մալուխները շարժական լուսատուները, սնման ժամանակավոր վահանակները և մյուս բոլոր սարքերը, որոնք պետք է համապատասխանեն արդյունաբերական չափանիշներին՝ տեխնիկական և տեխանվտանգության մասով: Բոլոր սնման վահանակները/աղբյուրները պետք է հողանցվեն և պաշտպանված լինեն կարճ միացումներից: Արգելվում է օգտագործել անսարք, ինքնաշեն անջատիչներ, ապահովիչներ, ջարդված խրոցակներ, վարդակներ և այլն, ինչպես նաև ցանկացած տիպի անսարք/վնասված սարքավորումներ, որոնք կարող են հանգեցնել հոսանքահարմանը: Բոլոր ժամանակավոր մալուխները պետք է տեղադրել չոր մակերեսներին՝ բացառելով դրանց աշխատանքի ժամանակ վնասելու հնարավորությունը:	Contractor should provide all needed extension cables, portable lights, temporary power boards and etc. equipment, all as per the industrial standards and without damages or hazards for using. All used power boards should be grounded as a protection against short circuits. It is not allowed to use faulty breakers, self-made fuses, broken plugs and sockets and etc. damaged equipment which can cause electrical shocks. All laid temporary cables should be installed at dry surfaces without possibility to be smashed during the works.
4.3.2.Խտացված օդի մատակարարում	4.3.2 Compressed air supply
	The Contracting Authority shall not provied

Աշխատատեղում Պատվիրատուն չի ապահովում խտացված օդով:	compressed air in the workplace.
4.3.3.Շինհրապարակի տրամադրում Պատվիրատուն պարտավորվում է ազատել բոլոր տարածքները որտեղ պետք է կատարվեն շինարարական աշխատանքներ;	4.3.3 <u>Provision of construction area</u> The Contracting Authority shall empty all the rooms, where construction work shall be carried out.
4.3.4.Տեխանվտանգություն Աշխատանքները պետք է կատարվեն տեխանվտանգության ՀՀ նորմատիվ պահանջներին և Պատվիրատուի ընթացակար-գերին և չափանիշներին համապատասխան: Աշխատանքները սկսելուց առաջ Պատվիրատուն կատարում է Կապալառուի և ենթակապալառուի աշխատողների հրահանգավորում աշխատանքի անվտանգության և պաշտպանության թեմայով: Պետք է գնահատել բոլոր առկա վտանգները և նախաձեռնել միջոցներ վնասվածքները կանխարգելու համար Փակ տարածքներում օգտագործել միայն ցածր լարման լուսատուներ (12-36Վ): Աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուի բոլոր աշխատողներին պետք է տեղեկացնել տարհանման սխեմայի և արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգի մասին: Աշխատանքները սկսելուց առաջ ՔոնթուրԳլոբալի ներկայացուցիչը Կապալառուին տեղեկացնում է՝ - Աշխատատեղի յուրահատուկ վտանգների - Նույն աշխատավայրում աշխատող այլ կապալառուների աշխատանքի արդյունքում առաջացող բոլոր վտանգների մասին Տեղամասում ցանկացած աշխատանք սկսելուց առաջ Կապալառուի ներկայացուցիչը պարտավոր է ձեռք բերել աշխատանքի թույլտվություն (կարգագիր) Պատվիրատուի արտադրական ստորաբաժնից:	<u>4.3.4 Safety:</u> Site works must be performed following all Armenian safety regulations and Contracting Authority's safety procedures and standards. Before start of the work, Contracting Authority makes safety induction for all employees of the Contractor and subcontractors. All existing hazards should be assessed and measures should be taken to prevent injuries. In confined spaces, only low voltage to be used for portable lighting (12-36V). Before the start of the works, every employee of the Contractor should be informed for the evacuation schemes and procedures in case of emergencies. Before the beginning of the works, CG representative will inform the Contractor for: • All specific hazards on the jobsite. • All existing hazards arising from the works of other contractors working at the same time in the area. Before the beginning of any site activity, the representative of the Contractor should obtain work permit (ORDER) from the operational staff of the Contracting Authority. e
4.3.4.1.Անհատական պաշտպանության միջոցներ (ԱՊՄ) Աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուն պետք է ներկայացնի, որ իր բոլոր աշխատողները ապահովված են անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցներով՝ համաձայն Պատվիրատուի տեխանվտանգության չափանիշների և ընթացակարգերի:	4.3.4.1 Personal Protective equipment (PPE): Before the start of the works, Contractor should show that all his staff is equipped with the required personal protective equipment as per the safety standards and procedures of the Contracting Authority.

Արգելվում է - Օգտագործել անսարք կամ ինքնաշեն գործիքներ կամ ժամկետանց գործիքներ կամ սարքեր - Օգտագործել անսարք կամ ոչ համապատասխան (չափերի) երկարացման լարեր, լուսատուներ, կամ լարում, որոնք չեն համապատասխանում փակ տարածքներում աշխատելու պահանջներին: 4.3.4.2.Հակահրդեհային պաշտպանության ընդհանուր կանոններ՝ եռակցման, հղկման և կրակային այլ աշխատանքների ժամանակ: Բոլոր կրակային աշխատանքները պետք է կատարել միայն աշխատանքի թույլտվություն/կարգագիր ստանալուց հետո: Կապալառուն պետք է. - Կրակային աշխատանքների տեղամասը մաքրի դյուրավառ նյութերից և պահպանի անվտանգության գոտի՝ առնվազն 5մ պարագծով: - Եթե դյուրավառ նյութերը հնարավոր չէ հեռացնել անվտանգության եզրագծից այն կողմ, Կապալառուն այդ նյութերը պետք է մեկուսացնի հուսալի ցանկապատով: - Կրակային աշխատանքների տարածքը ապահովի կրակմարիչներով և անհրաժեշտության դեպքում հակահրդեհային այլ միջոցներով: - Կրակով աշխատանքներ կատարելու ժամանակ կանխարգի բոցերի, տաք մասնիկների հպումը դյուրավառ նյութերի հետ - Աշխատանքներն ավարտելուց հետո անպայման անջատի բոլոր սնման աղբյուրները (հղկման, եռակցման): - Հրդեհի բռնկման դեպքում պետք է անմիջապես դադարեցնի բոլոր աշխատանքները: Անհապաղ տեղեկացնի արտադրական ստորաբաժնի պատասխանատու անձնակազմին և համապատասխան աշխատողները պետք է անմիջապես նախաձեռնեն կրակը մարելու	**Forbidden is:** • usage of faulty or self-made tools or such tools for which any required periodical check is expired; • Faulty or not correctly sized extension cables, lamps or voltage level different from the required for work at confined spaces. 4.3.4.2 General rules for fire prevention and firefighting during hot works (grinding, welding): All hot works can be performed only after obtaining the required work permits. Contractor should: • Clean the area of the hot works from flammable material and maintain safety perimeter of at least 5m. • When flammable materials cannot be removed from the safety perimeter, contractor should ensure reliable fences around that materials. • Ensure the necessary fire extinguishers and if needed other firefighting equipment near the hot works. • Not allow, during the hot works, arcs and/or hot debris to reach flammable materials. • After the completion of the works, all power or other supply to the welding or grinding equipment should be unplugged. • In case of fire, all works should be immediately stopped. Immediately should be notified the responsible operational staff and firefighting actions started immediately by the involved workers. Hot works are allowed to be executed only by qualified workers.

գործողություններ: Կրակային աշխատանքներ կարող են իրականացնել միայն համապատասխան որակավորում ունեցող աշխատողներ: **5. Պատվիրատուի պարտականությունները** 5.1 Տրամադրել նյութերի և աշխատանքի համար անվտանգ աշխատավայր 5.2 (Միայն) էլեկտրական սնման ապահովում՝ 380/220 վ փոփոխական հոսանքի: **6. Տեղեկատվական փաստաթղթեր** - ԱՊՄ օգտագործման հրահանգ - "Տեխնիկական կանոնակարգ, էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ"՝ հաստատված ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 1933-Ն որոշմամբ - ՔԳ տեխանվտանգության, աշխատանքի և շրջակա միջավայրի պաշտպանության ընթացակարգեր	**5. Obligations of the Contracting Authority** 5.1 To hand-over safe area for the works and materials; 5.2 To ensure feeders (only) of 380/220VAC; **6 Reference Documents:** • Instruction for usage of PPE. • State Regulations on Safe Operation of electrical equipments, systems and facilities, approved by RA Government Resolution №1933-N/2006 • Procedure of ContourGlobal for H&SE:

CONTOURGLOBAL

Ն ա խ ա հ ա շ ի վ
Bill of Quantity

	Document no. *Փաստաթղթի N*	Sheet / էջ	1	-	6

Project Նախագիծ	*Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգում և ճանապարհի կառուցում* *Capital repair of Spandaryan HPP pressure pipeline basin and construction of road*	Security Index Անվտանգության ինդեքս
Title Անվանում		

Շինարարական աշխատանքներ
Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգում և ճանապարհի կառուցում
Construction works
Capital repair of Spandaryan HPP pressure pipeline basin and construction of road

0	27.02.2020	TR	A. Gasparyan Ա. Գասպարյան	A.Galstyan Ա.Գալստյան	A.Yolyan Ա. Յոլյան
REV Վերանայում	Date Ամսաթիվ	Scope Ծավալ			

1. *Սպանդարյան ՀԷԿ-ի ճնշումային խողովակաշարի ավազանի հիմնանորոգում և ճանապարհի կառուցում*
Capital repair of Spandaryan HPP pressure pipeline basin and construction of road

2. *Մատակարարման ծավալը/Scope of supply*

3. Սույն նախահաշվի առարկա հանդիսացող աշխատանքների ծավալն է՝

Scope of works subject of this Bill of Quantity is:

3, Նախահաշիվ/ Bill of quantity

ՀՀ N	Աշխատանքների և ծախսերի անվանումը, չափի միավորը Name of the works and expenses, measure unit	Չափ.միավ M.unit Չա	Քանակ/ Quantity	Միավորի արժեքը (ՀՀ դրամ) Unit price (AMD)			Ընդհանուր արժեքը(ՀՀ դրամ) Total cost (AMD)		
				Ընդհանուր Total	Աշխատանք/Work	Նյութեր Materials	Աշխատանք Work	Նյութեր Materials	Ընդհանուր Total
1	2	3	4	5	6	7	8	9	10
	<u>I. Ճնշումային խողովակի շահագործման ճանապարհ Pressure pipe operation road</u>								
1	IV կարգի գրունտի քանդում էքսկավատորով՝ բարձելով ինքնաթափի վրա, և տեղափոխում 0,5կմ Demolition of IV class ground soil with an excavator, loading on dumper and transporting for 0.5 km	մ^3 m^3	8900.0						
2	VII կարգի գրունտի քանդում (փխրեցում հիդրոմուրճով) էքսկավատորով՝ բարձելով ինքնաթափի վրա, և տեղափոխում 1կմ Demolition of VII class ground soil (loosening with hydraulic hammer) with an excavator,	մ^3 m^3	1100.0						

	loading on dumper and transporting for 1 km								
3	VII կարգի գրունտի քանդում (փխրեցում հիդրոմուրճով)էքսկավատորով բարձելով ինքնաթափի վրա, և տեղափոխում 0,5կմ Demolition of VII class ground soil (loosening with hydraulic hammer) with an excavator, loading on dumper and transporting for 0,5 km	մ^3 m^3	3200.0						
4	Լիցքի իրականացում Filling	մ^3 m^3	12100.0						
5	Հողային պաստառի հարթեցում Leveling of soil roadbed	մ^2 m^2	7303						
	Կառուցման աշխատանքներ *Construction work*								
1	Հողային պաստառի հարթեցում և խտացում Levelling and tightening of soil roadbed	մ^2 m^2	2577.6						
2	Խճի շերտի իրականացում 40-70մմ ֆրակցիայի Implementation of gravel layer of 40-70 mm fraction	մ^3 m^3	1548						
3	Խճի շերտի իրականացում 20-40մմ ֆրակցիայի Implementation of gravel layer of 20-40 fraction	մ^3 m^3	874.0						
4	Լիցքային գրունտ 25% խճային մասնիկներով Filling soil with 25% gravel particles	մ^3 m^3	1074.0						
5	Մոնտաժային հարթակի մետաղական ճաղաշարի մոնտաժում Installation of metal grating of the mounting platform	տ t	0.256						
	Ընդամենը/Total								

	II. ***Ճնշումային խողովակաշարի վերանորոգման աշխատանքներ*** ***Pressure pipeline repair work***								
	Մաքրման աշխատանքներ *Cleaning work*								
1	Հավասարակշռող աշտարակի բետոնյա ծածկի մաքրում բուսականությունից և հողածածկույթից ձեռքով, բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 1կմ հեռավորությամբ թափոնավայր Manual cleaning of the concrete cover of the equalizing tower from vegetation and earth covering, loading on the dumper and transporting up to 1 km to the landfill	մ³ m^3	40.0						
2	Խրամուղու հատակի մաքրում բուսականությունից, հողից և քարերից ձեռքով Manual cleaning of the trench floor from vegetation, soil and stones	մ³ m^3	570.0						
3	Խրամուղու եզրաշերտի մաքրում հողածածկույթից ձեռքով 0.6-0.8մ լայնությամբ, 0.4-0.6մ խորությամբ Manual cleaning of the trench edge from soil covering, 0.6-0.8m in width, 0.4-0.6 m in depth	մ³ m^3	630.0						
4	Բուսական աղբի բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 1կմ հեռավորությամբ թափոնավայր Loading vegetation waste on dumper and transporting up to 1 km to the landfill	մ³ m^3	1200.0						

	Քանդման աշխատանքներ *Demolition work*								
1	Խրամուղու շեպերի, հատակի և հենարանների հիմքերի վթարային հատվածների բետոնի քանդում 10-40սմ հաստությամբ հետհար մուրճով Demolition of the concrete of damaged section of trench slopes, floor and support foundations with a jackhammer, thickness: 10-40 cm	մ^3 m^3	230.0						
2	Խրամուղու շեպերի, հատակի և հենարանների հիմքերի քայքայված երեսարկի բետոնի քանդում 3-5սմ հաստությամբ հետհար մուրճով Demolition of the deteriorated concrete lining of the trench slopes, floor and support foundations with a jackhammer, thickness: 3-5 cm	մ^3 m^3	1770.0						
3	Շինարարական աղբի բարձում ինքնաթափի վրա և տեղափոխում մինչև 1կմ Loading construction waste on dumper and transporting up to 1 km	մ^3 m^3	2000.0						
	Վերականգնման և հարդարման աշխատանքներ *Rehabilitation and finishing works*								
1	Խրամուղու հատակի, շեպերի և հենարանների հիմքերի բետոնապատում B 15 դասի բետոնով Concreting of trench floor, slopes and support foundations with B 15 class concrete	մ^3 m^3	950.0						
2	Ամրան AIII Reinforcing bar AIII	տ t	5.861						
3	Ամրան AI Reinforcing bar AI	տ t	0.652						

4	Խրամուղու շեպերի վրա մետաղական աստիճանի իրականացում Implementation of metal ladder on the trench slopes	տ t	0.068						
5	Կլոր անցքերի բացում շեպերի վրա 20մ քայլով Opening of round holes on the slopes with 20 m cell	տեղ space	116						
6	Դրենաժային խողովակների de90, PN=1,0ՄՊա մոնտաժում, փորձարկումով Installation and testing of drainage pipes de90, PN=1,0MPA	մ m	70.0						
7	Խրամուղու շեպերի և հենարանների բետոնե հիմքերի արտաքին մակերեսի փոշու և բետոնի մնացորդների հեռացում օդամղիչով, թրջում կոնտակտային սոսնձով Removal of concrete residues and dust from the outer surface of concrete foundations and trench slopes with compressed air, soaking with contact glue	$մ^2$ m^2	6800.0						
8	Տորկրետսվաղ 60մմ հաստությամբ Shotcrete-plaster, thickness: 60 mm	$մ^2$ m^2	600.0						
9	Ամրան AIII Reinforcing bar AIII	տ m^3	41.0						
10	Ամրան AI Reinforcing bar AI	տ t	20.4						
	Ընդամենը/Total								
	III. ***Մեկուսացման աշխատանքներ*** ***Insulation work***								
1	Խողովակաշարի և մետաղական կոնստրուկցիաների արտաքին մակերեսի մաքրում հին ներկից ավազաշիթային մեթոդով Cleaning of the outer surface of pipelines and metal constructions	$մ^2$ m^2	12200.0						

	from old paint by sandblasting method								
2	Խողովակաշարի և մետաղական կոնցտրուկցիաների երկտակ ներկում ալյումինի փոշու և օլիֆիլի խառնուրդից ստացված ներկով Two-layer painting of the pipeline and metal constructions with paint obtained from a mixture of aluminum powder and drying oil	մ^2 m^2	12200.0						
	Ընդամենը/Total								
	<u>IV</u> **<u>Մետաղական կոնստրուկցիաներ</u>** **<u>Metal constructions</u>**								
1	Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում Installation of metal constructions	տ t	5.435						
	Ընդամենը/Total								
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ/TOTAL								